

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

..... 2012 թվականի N ....-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ին <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին>> N 53-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված հավելվածի ցուցակի N N 92-րդ, 101-րդ, 137-րդ և 254-րդ կետերը կարդալ հետևյալ նոր խմբագրությամբ

NN ը/կ	Ազգանունը, անունը, հայրանունը	Համայնքի անվանումը	Վնասվածության մակարդակը
1	2	3	4
92.	Ավայյան Զոյա Սարգսի	Մոսեսգեղ	նվազագույն
101.	Ադամյան Գյուլնարա Իյյազի	Մոսեսգեղ	նվազագույն
137.	Բուդուրյան Ամալյա Հակոբի	Թովուզ	նվազագույն
254.	Մաճկալյան Գոհար Հրաչիկի	Այգեպար	միջին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ**

**1. Իրավական ակտի անհրաժեշտությունը**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը մշակվել է Մոսեսգեղ /Մովսես/, Տավուշ /Թովուզ/ և Այգեպար համայնքների ղեկավարների գրությունների հիման վրա:

**1.1 Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.**

«Տավուշի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ուժեղացող խնդիրների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրների լուծման հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ին «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ուժեղացող խնդիրների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչներին ֆինանսական օգնություն տրամադրելու մասին» N 53-Ա որոշմամբ /այսուհետ՝ Որոշում/ հաստատված ցուցակի համաձայն, որտեղ ընդգրկված են 332 ընտանիքներ:

Համաձայն որոշման 4 կետի 2) ենթակետի օգնությունը տրամադրվում է ընտանիքին՝ ուժեղացող խնդիրների հետևանքով վնասված բնակելի տան վերանորոգման աշխատանքներ կատարելու նպատակով: Վերը նշված համայնքի ղեկավարները ներկայացրել են, որ Որոշման մեջ ընդգրկված Խաչատուր Պապինի Ավայանը ու Արաքսյա Բախշինի Ադամյանը /գ. Մովսես/, ինչպես նաև Հակոբ Վանիկի Կելեյանը /գ. Տավուշ/ մահացել են, իսկ Սաշա Մաճկալյանը /գ. Այգեպար/ ներկա պահին բացակայում է հանրապետությունից և նրա գտնվելու վայրը անհայտ է:

**1.2 Առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

Որոշման նախագծով առաջարկվում է հնարավորություն տալ Հայաստանի Հանրապետության կառավարության Որոշմամբ նախատեսված օգնության գումարները տրամադրելու վերը նշված ընտանիքների հաջորդ անդամներին, որի համար անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ին N 53-Ա որոշման մեջ կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

**2. Կարգավորման առարկան՝**

«Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ուժեղացող խնդիրների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման հետ կապված հարցերի կարգավորումն է:

**3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվում է բախվալել ՀՀ Տավուշի մարզերի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ոմբակոծությունների հետևանքով վնասված բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանները:

### **ՏԵՂԵԿԱՆՔ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ  
19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

### **ՏԵՂԵԿԱՆՔ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ  
19-Ի N 53-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի N 53-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում: